ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար օդորակիչների, բազկաթոռների և անվտանգության ապահովման սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/23» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«22» օգոստոսի 2024թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարար

Կարեն Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - տնտեսագետ

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Նիստից բացակայում էր՝

Անդրանիկ Աբգարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

1. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի մուտքագրման (լրացման) մասին.

1.1. «ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է հրավերով պահանջվող էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1), հայտում բացակայում է հրավերով պահանջվող իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) չեն 1-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը:

1.2. Արգավանդ Կահույք ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1), իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը, ինչպես նաև Համակարգում

մուտքագրված (լրացված) է 4-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

1.3. «ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1), իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) է 5-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը: Հայտում առկա փաստաթղթերը հաստատված չեն տնօրենի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հաստատված են այլ անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, սակայն հայտով ներկայացված չէ վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ (լիազորագիր):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի (հայտերում առկա փաստաթղթերի, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի)՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

2.1. «ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ դիմում հայտարարությունը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Վերոնշյալ դիմում հայտարարության 2)-րդ կետի երրորդ պարբերությամբ նախատեսված աղյուսակում նշված տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել, քանի որ հրավերով հիշյալ աղյուսակի լրացման պահանջ սահմանված չէ:

2.2. Արգավանդ Կահույք ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար,

- ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար,

- 4-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին և գնահատվում է բավարար:

2.3. «ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ դիմում-հայտարարության 1)-ին կետում ներառված չէ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/23» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին «ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ին փոխկապակցված անձանց բավարարելու մասին հավաստումը,

- ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,

- 5-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

- նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2024թ. օգոստոսի 26-ին, ժամը 11:00-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/23» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11-րդ կետի պահանջներով՝ **«ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ-ի և «ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ի** հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով՝ Համակարգի միջոցով ծանուցել հիշյալ մասնակիցներին՝ առաջարկելով մինչև սույն թվականի **օգոստոսի 23-ը ներառյալ** Համակարգի միջոցով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Նորայր Աղամալյան

_____ Վարդան Կարապետյան

_____ Կարեն Կարապետյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դադիվանյան